ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ԲՆ-ԴՇ-16/01

ք.Երևան «25» «հունվարի» 2016թ.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավարի ժ/պ **Խ.Աղաբեկյանի** (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Տեղեկատվական վերլուծական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը**, ի դեմս տնօրեն **Հ.Գասպարյանի** (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1555-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), **«Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական ծառայություններ»** ծրագրի՝ բաժին 05, խումբ 06, դաս 01, ծրագիր 03 (բնապահպանական ոլորտի վերլուծական տեղեկատվական, ինտերնետային կայքի սպասարկման և զարգացման միջոցառումներ) (այսուհետ՝ ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև **20 517 400 (քսան միլիոն հինգ հարյուր տասնյոթ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումար**, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելված 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Սույն պայմանագրի պայմանները տարածվում են 2016 թվականի հունվարի 8-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը (հավելված 2) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:
8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:
8.3. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:
8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	Կազմակերպություն
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ք.Երևան, Կառավարական 3-րդ շ, 8-րդ հարկ «Յունիբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011007920 ՀՎՀՀ 02507198	ՀՀ 24124005544200 ՀՎՀՀ 02540474
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժ/պ	«Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Ի.Ադաբեկյան	Հ.Գալստյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված № 1
«25» «հունվարի» 2016թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-ԴԾ-16/01 պայմանագրի

Պետական մարմին
ՀՀ բնապահպանության նախարարություն

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 900011007920
ՀՎՀՀ 02507198
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժ/պ
Գ. Ն. Առաքելյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կազմակերպություն
«Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ

ք.Երևան, Կառավարական 3-րդ շ, 8-րդ հարկ
«Յունիբանկ» ՓԲԸ

ՀՀ 24124005544200
ՀՎՀՀ 02540474
«Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Ս. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
«Բնապահպանական ոլորտի վերլուծական տեղեկատվական ծառայություններ» ծրագրի իրականացման

NN h/h	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնա-ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմում և նրա առանձնացված ստորաբաժանումներում տեղային համակարգչային ցանցերի և առկա համակարգչային տեխնիկայի ծրագրային և տեխնիկական սպասարկում և վերանորոգում, էլեկտրոնային փոստի, ինտերնետ կապի տեխնիկական սպասարկում	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմում և նրա առանձնացված ստորաբաժանումներում առկա համակարգչային, տպագրական տեխնիկայի և պատճեհանման սարքերի, տեղային ցանցերի սպասարկում	Համակարգչային և տպագրական տեխնիկայի պարբերական անխափան աշխատանքի կազմակերպում (կանխարգելիչ միջոցառումների իրականացում, անսարքությունների վերացում), web, E-mail և File սերվերների աշխատանքի կազմակերպում, տեղային ցանցերի սպասարկում	համակարգչային տեխնիկայի և տեղային ցանցի անխափան աշխատանք	30.12.2016թ.	**11 011 000**
2	Նախարարության պաշտոնական կայքի սպասարկում, այդ թվում՝ նյութերի հավաքագրում, ամփոփում, մշակում, տեղադրում: Կայքի պարբերաբար թարմացում: Ընդունված կարգով եռալեզու ներկայացում: Բնապահպանական ոլորտի տեղեկատվության հավաքագրում, մշակում, ամփոփում և արխիվացում	Համաձայն ընդունված կարգի նախարարության ստորաբաժանումներից ստացված տեղեկատվության մշակում, ամփոփում և տեղադրում կայքում: «Հիդրոմետ» և մոնիտորինգի տվյալների արխիվացում և տեղադրում տեղային ցանցում	Կայքում նյութերի տեղադրում՝ ըստ սահմանված կարգի: Եռալեզու կայքի ամենօրյա թարմացում	Գործող 1 www.mnp.am կայք	30.12.2016թ.	**5 601 000**
3	ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության կողմից օգտագործվող տվյալների շտեմարանների շահագործման ընթացքում առաջացած խնդիրների վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում և տվյալների ամփոփում: ՕՊՕ համակարգի սպասարկում:	ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչությունում տեղադրված տեղեկատվական շտեմարանների սպասարկում, վիճակագրական հաշվետվությունների տվյալների վերլուծություն: ՕՊՕ համակարգի սպասարկում:	Վարչական վիճակագրական հաշվետվությունների («Անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի մասին», «Ջրօգտագործման մասին», «Թափոնների մասին») համար ստեղծված շտեմարանների նորացում: Կազմակերպությունների շտեմարանների նորացում: ՕՊՕ-ի շտեմարանի նորացում:	Տեղադրված 4 շտեմարանների առկայություն. ՕՊՕ -ի շտեմարան:	30.12.2016թ.	**2 095 000**
4	ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական մարմիններին, հասարակական կազմակերպություններին ու հասարակությանը ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքի միջոցով բնապահպանական ոլորտի տեղեկատվության տրամադրում, ինչպես նաև «Բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի» (Օրհուս կենտրոնի) սպասարկում	Բնապահպանական ոլորտի տեղեկատվության տրամադրում և Օրհուս կենտրոնի միջոցառումների կազմակերպում	1. Սեմինարների, բաց դասերի, հասարակական լսումների կազմակերպում. 2. Հասարակությանը տեղեկատվության տրամադրում. 3. Գրադարանի և ֆիլմադարանի այցելուների սպասարկում.	Երևանյան Օրհուս կենտրոնի սպասարկում և խորհրդատվության տրամադրում 14 մարզային կենտրոններին	30.12.2016թ.	**1 810 400**
	ԸՆԴԱՄԵՆԸ					**20517400**

Հավելված № 2
«25» «հունվարի» 2016թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-ԴԾ-16/01 պայմանագրի

Պետական մարմին
ՀՀ բնապահպանության նախարարություն

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

900011007920
02507198
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավարի ժ/պ
Խ.Աղաջանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կազմակերպություն
«Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ

ք.Երևան, Կառավարական 3-րդ շ, 8-րդ հարկ
«Յունիբանկ» ՓԲԸ

ՀՎՀՀ 24124005544200
ՀԿՀ 02540474
«Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն
Հ.Գալստյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագիր

Ծրագրային դասիչը		Անվանումը **Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական ծառայություններ**	Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
1016	ԱԾ 02	Նկարագրություն Բնապահպանական ոլորտի վերլուծական տեղեկատվական, ինտերնետային կայքի սպասարկման և զարգացման աշխատանքներ								
Չափորոշիչներ			I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	Տարի	I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	Տարի
Քանակական		Նախարարության պաշտոնական կայքի սպասարկում, այդ թվում՝ նյութերի հավաքագրում, ամփոփում, տեղադրում: Կայքի պարբերաբար թարմացում: Ընդունված կարգով եռալեզու ներկայացում: Բնապահպանական ոլորտի տեղեկատվության հավաքագրում, մշակում, ամփոփում և արխիվացում:	1	1	1	1				
		ՀՀ բնապահպանական նախարարության բնապահպանական պետական տեսչության կողմից օգտագործվող տվյալների շտեմարանների շահագործման ընթացքում առաջացած	4	4	4	4				

	խնդիրների վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում և տվյալների ամփոփում, հաշվետվությունների թիվը								
	ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական մարմիններին, հասարակական կազմակերպություններին ու հասարակությանը ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքի միջոցով բնապահպանական ոլորտի տեղեկատվության տրամադրում, ինչպես նաև «Բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի» (Օրհուս կենտրոնի) սպասարկում:	15	15	15	15				
	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմում և նրա առանձնացված ստորաբաժանումներում տեղային համակարգչային ցանցերը և առկա համակարգչային տեխնիկայի ծրագրային և տեխնիկական սպասարկում և վերանորոգում, էլեկտրոնային փոստի, ինտերնետ կապի տեխնիկական սպասարկում /3 ցանց/ համակարգիչների քանակը	180	180	180	180				
Որակական	Մշակված չէ								
Ժամկետայնության	Աշխատանքների կատարման ժամկետը				Ընթացիկ տարվա I-ին եռամսյակ				
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (տոգավոր դրամ)		X	X	X	X	3426.4	8555.7	13685.1	20517.4

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է բաղադրականության միջոցառումը
1016 Շրջակա միջավայրի պահպանության, մոնիտորինգի և տեղեկատվական վերլուծական ծառայություններ
Վերջնական արդյունքի նկարագրությունը
Շրջակա միջավայրի վրա ազդեցության բացասում/մեղմում
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը
«Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ